

Առաջադրանք 3: Փոլ Կրուզմանի «Ռիկարդոյի դժվարին գաղափարը» հոդվածի ամփոփումը

«Ռիկարդոյի դժվարին գաղափարը» հոդվածի հեղինակը փաստում է, որ կրթված մարդկանց համար ինչ-ինչ պատճառներով դժվարընկալելի է Ռիկարդոյի մոդելը, և այս հոդվածի միջոցով փորձում է մեկնաբանել դրա պատճառները:

Նրա կարծիքով քչերն են իսկապես ընկալում մոդելը, ոմանք էլ պարզապես ձևացնում են, թե հասկացել են, բայց այն համարում են չափազանց պարզունակ կամ ոչ կիրառելի: Երբեմն էլ հասկանալու փոխարեն քննադատները ձգտում են ցույց տալ, թե ինչ թերություններ ունի մոդելը գործնականում կիրառելու համար:

Ռիկարդոյի մոդելը առաջին հայացքից թվում է պարզ, սակայն իրականում այն ներառում է մի ամբողջ շարք փոխկապակցված գաղափարներ, որոնք առնչվում են օրինակ՝ մրցակցային շուկաներին, աշխատավարձի որոշմանը, վճարային հաշվեկշռին: Մոդելը ներկայացնելիս հաճախ ենթադրվում է, թե լսարանը տեղյակ է այդ բոլոր մյուս գաղափարներից: Այնինչ առանց դրանք իմանալու Մոդելը մեծ չափով մնում է չընկալված:

Հաճախ ամենապարզ թվացող գաղափարները պարզաբանման կարիք ունեն, քանի որ կարող են չընկալվել անգամ տնտեսագետների կողմից: Բրիտանացի Ֆինանսիստ Ջեյմս Գոլդսմիթը «Թակարդ» գրքում (1994թ.) նշում է, որ տարբեր երկրներում աշխատավարձը տարբեր է, ինչը Ռիկարդոյի մոդելը հաշվի չի առնում, և դա այն դարձնում է անիրական: Սակայն Գոլդսմիթը բաց է թողնում Ռիկարդոյի մոդելի հիմնական գաղափարներից մեկը. այն, որ առևտուրը փոխշահավետ է անկախ աշխատավարձերի տարբերությունից:

Մյուս կարևոր գաղափարը, որ չի ընկալվել շատերի և, մասնավորապես, ամերիկացի լրագրող Ջեյմս Ֆալլոուսի կողմից, այն է, որ առևտրի միջոցով երկու երկրների եկամուտները կարող են միաժամանակ աճել: Դա նշանակում է՝ նրանք չեն հասկացել համեմատական առավելության սկզբունքը:

Ռիկարդոյի մոդելում առկա են առնվազն երեք անբացահայտ ենթադրություններ, որոնք ակնհայտ չեն ոչ տնտեսագետների համար: Դրանք են.

1. Աշխատավարձը որոշվում է երկրի աշխատանքի շուկայում: Ռիկարդոյի մոդելում առկա է միայն մեկ ռեսուրս՝ աշխատանք, որը կատարյալ շարժուն է երկրի արտադրությունների միջև: Եվ աշխատողները կարող են ընդլայնել իրենց եկամուտները, եթե տեղաշարժվեն տնտեսության այն ճյուղերը, որոնցում երկիրն ունի համեմատական առավելություն: Սակայն տնտեսության մի ճյուղում աշխատավարձը մեծ չափով պայմանավորվում է տնտեսության այլ ճյուղերում համանման աշխատողների աշխատավարձով: Բացի այդ՝ աշխատավարձը ներծին է և կախված է արտադրողականությունից, սակայն ոչ թե մեկ կամ մի քանի առանձին ճյուղերի, այլ տնտեսության ընդհանուր միջին արտադրողականությունից:
2. Հաստատուն զբաղվածությունը խելամիտ մոտարկում է: Միջազգային առևտուրը վերաբերում է երկարատև ժամանակաշրջանին, իսկ այդ ընթացքում

տնտեսությունն ունակ է ինքնակարգավորվելու և կարող է ապահովել լրիվ զբաղվածություն:

3. Վճարային հաշվեկշռի անհավասարակշռվածությունը բարդություն չի հարուցում: Այստեղ նույնպես գործում է ինքնակարգավորման մեխանիզմը: Բացի այդ, քանի որ առևտրային հաշվեկշիռը հավասար է խնայողությունների և ներդրումների տարբերությանը, ապա երկիրը կարող է ունենալ առևտրի բացասական հաշվեկշիռ, եթե գրավիչ է օտարերկրյա ներդրումների համար:

Արդյունքում՝ համեմատական առավելության սկզբունքը հասարակության լայն շերտերին հասկանալի դարձնելու համար Կրուգմանն առաջարկում է բացատրել անգամ ամենապարզ գաղափարները, քանի որ լսարանը սովորաբար լիովին անտեղյակ է, և հիմնավորել մոդելավորման անհրաժեշտությունը, քանի որ շատերը չեն գիտակցում, թե ինչպես է այն դյուրացնում գաղափարների ընկալումը:

Վերջում Կրուգմանը հիշեցնում է, որ Ռիկարդոյի մոդելը, թեպետ խորապես դժվար է, սակայն ամբողջապես ճշմարիտ է և բացարձակապես համապատասխան է ժամանակակից աշխարհին: